ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 30/11

Քաղ.Երեւան **31 մայիս 2011թ.**

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաեւ բողոքարկման խորհուրդ) հետեւյալ կազմով՝ խորհրդի նախագահ՝ Ա.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս. Խաչիկյան, Ա.Ա.Տոնիկյան, Ա. Բաբայան, Ա. Հ. Աբգարյան Ա.Գ. Շահինյան եւ Ա.Ի.Ղարիբջանյան (քարտուղար), իր 2011թ. մայիսի 31-ի նիստում (արձանագրություն N 4/1) քննարկեց «Հիմալայա Գլոուբլ Հոլդինգզ Լթդ.» ընկերության կողմից 2011թ. մայիսի 18-ին ներկայացված «CONFIDO» (հայտի համարը՝ N 20100461) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Մերժման հիմք են հանդիսացել «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, 2-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետը և «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 88-րդ կետի 1-ին ենթակետը, 106-րդ կետի 1-ին մասի «ա» ենթակետը, 107-րդ կետի 1-ին ենթակետը, 110-րդ, 111-րդ կետը, 115-րդ կետի 1-ին ենթակետը, 116-րդ կետի 1-ին, 117-րդ կետը, 1-ից 9-րդ ենթակետերը, 118-րդ կետի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ ենթակետերը, 119-րդ կետի 1–ին ենթակետը համաձայն որոնց, որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նման է ավելի վաղ ապրանքային նշանին և դրանով մակնիշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված «CONFIDO» ապրանքային նշանը չի կարող գրանցվել, բանի որ այն շփոթելու աստիճան նման է ավելի վաղ առաջնությամբ միջազգային գրանցման հիման վրա ՀՀ տարածքում պահպանվող «CONFIDOR» (BAYER AKTIENGESELLSCHAFT, Kaiser-Wilhelm-Allee 51373 Leverkusen (DE) N 460120) ապրանքային նշանին: Համեմատվող բառային նշաններն ունեն գրաֆիկական նմանություն, որը որոշվում է ընդհանուր տեսողական տպավորությամբ:

Բողոքում նշված է, որ հիշյալ հայտի համար ՀՀ մտավոր սեփականության գործակալությունը կրկնական փորձաքննության մերժման որոշում է կայացրել: Մերժման հիմք է հանդիսացել «Bayer Aktiengellschaft» ընկերության «CONFIDOR» IR N460120 միջազգային նշանի ավելի վաղ գրանցման առկայությունը: Սակայն, բողոքարկողը համաձայն չէ փորձագետի դիրքորոշման հետ և խնդրում է վերանայել այն:

Բողոքարկողը խնդրում է ուշադրություն դարձնել այն փաստին, որ չնայած մերժված և հակադրված ապրանքային նշանները բառային նշաններ են, սակայն դրանք շփոթության աստիճան իրար նման չեն և դրանց ընկալումը սպառողի կողմից տարբերվում է գրաֆիկական, հնչյունային և իմաստային տեսակետերից:

Բողոքարկողը նշում է, որ նշանների գրաֆիկական տարբերությունը կայանում է դրանց կազմության մեջ: Հայտարկվող «CONFIDO» նշանն իրենից ներկայացնում է լատիներեն այբուբենի մեծատառերով կազմված 7 տառից բաղկացած բառ, որը կարդացվում է «քընֆիդոու»: Մինչդեռ, հակադրվածն իրենից ներկայացնում է նույն այբուբենի մեծատառերով կազմված, 8 տառից բաղկացած նշան, որը կարդացվում է «քոնֆիդըր»: Առաջին հայացքից աննշան թվացող «r» (confior) տառի առկայությունը բավական մեծ դեր է խաղում նշանների տարբերակման ժամանակ, քանի որ դրա շնորհիվ բառն ստանում է այլ հնչյունային երանգ՝ դրանով իսկ տարբերվելով մերժված նշանից:

Նշված է, որ իմաստային տեսակետից բառերը նույնպես տարբեր են: Հայտարկվող «CONFIDO» բառը լատինական ծագում ունի և թարգմանաբար նշանակում է «հուսալ, ակնկալել», մինչդեռ հակադրված «CONFIDOR» բառը մտացածին է: Բողոքարկողը կարծում է, որ դա ևս ապացույց է նշանների տարբերության վերաբերյալ:

Բողոքարկողը բառակազմական վերլուծության արդյունքում հանգել է այն եզրակացության, որ «CONFIDO» և «CONFIDOR» բառերը տարբերվում են միմյանցից գրաֆիկական, հնչյունաբանական և իմաստային չափանիշներով, ուստի դրանցով մակնիշվող ապրանքների նկատմամբ հանրության մոտ շփոթության խնդիր չի առաջանա:

Բողոքարկողը ներկայացնում է ևս մի կարևորագույն հանգամանք, որը սպառողին զերծ կպահի շփոթությունից: Երկու նշանների տակ առաջարկվող ապրանքները, չնայած որ հայտարկվում են 5-րդ դասի համար, սակայն բոլորովին այլ նշանակություն և կիրառում ունեն, ինչը չափազանց կարևոր դեր է խաղում նշանների տարբերակման ժամանակ: Եվ այսպես, հայտարկված «CONFIDO» նշանով խնդրարկվում են հետևյալ ապրանքները, «դեղագործական պատրաստուկներ և դիետիկ նյութեր բուժական նպատակների համար»: Համաձայն հայտատուի կողմից ներկայացված տեղեկատվության հայտարկվող «CONFIDO» նշանով

մակնիշվող դեղորայքը հանդիսանում է ֆիտոդեղագործական պատրաստուկ, որը նախատեսված է սերմնացայտման խախտումների բուժման համար, ինչպիսիք են վաղաժամ սերմնացայտումը, սերմնարտազատումը և գիշերային արտանետումը: «CONFIDO» դեղամիջոցը կարգավորում է սերմնացայտման պրոցեսը, ինչպես նաև օգնում է բարձրացնել սեռական գրգռվածության շեմքը և նվազեցնում վախի գործոնը:

Բոլորովին այլ ոլորտում և այլ նշանակություն ունի «CONFIDOR» նշանով մակնիշված քիմիական նյութը, որը կիրառվում է գյուղատնտեսության, այգեգործության և անտառաբուծության մեջ և նախատեսված է հողի բարելավման համար, սննդային պահածոների պահմանման համար, բույսերի հիվանդությունների բուժման համար, կարգավորում է բույսերի աճը, պաշտպանում է բույսերը վնասատու կենդանիներից:

Բողոքարկողը նշում է, որ մարդկանց համար նախատեսված դեղամիջոցի և քիմիական նյութի սպառման ոլորտները միանգամայն տարբեր են, և գյուղատնտեսական քիմիկատները կամ նման միջոցները երբևէ չեն հայտնվի մարդկանց բուժման համար նախատեսված դեղամիջոցների հետ նույն դեղատանը կամ առավել ևս նույն վաճառասեղանին: Նման միջոցների համար գոյություն ունեն մասնագիտացված խանութներ և դրանց գնման համար սպառողը բնականաբար կայցելի հենց այդ կենտրոնները և ոչ թե կփնտրի դեղատներում, որտեղ նման նյութերի կամ քիմիկատների վաճառքը բացառվում է: Հետևաբար, դեղորայքի նկատմամբ ընտրության խիստ չափանիշներ կիրառող սպառողի կողմից էլ նման շփոթությունն անհնար է, նույնիսկ եթե նշանների միջև տարբերությունը մի տառի մեջ է կայանում: Նշված է, որ չնայած երկու նշաններն էլ հայտարկվում են 5-րդ դասի համար, սպառման և կիրառման ոլորտների բոլորովին տարբեր լինելու պարագայում շփոթության խնդիր չի առաջանա: Բողոքարկողը գտնում է Օրենքի 10.1.2 և2.1.«բ» կետերը տվյալ դեպքում կիրառելի չեն, քանի որ ապրանքները նույնատիպ չեն, և դրա շնորհիվ հանրության մոտ շփոթություն առաջանալու վտանգ չի կարող լինել: Նշված է, որ «CONFIDO» ապրանքային նշանը գրանցում է ստացել Սիրիայուն, Ուկրաինայում, Մոնղոլիայում, Բրունեյում, Նեպալում, Լաոսում, Մյանմարում, Կոստա Ռիկայում, Նիկարագուայում, Հնդկաստանում:

Ամփոփելով իր բողոքը՝ բողոքարկողը խնդրում է, հաշվի առնել նշված փաստարկները, վերանայել կրկնական փորձաքննության որոշումը՝ գրանցելով N 20100461 հայտով «CONFIDO» ապրանքային նշանը Հայաստանի Հանրապետության տարածքում:

Կոլեգիայի քննարկման արդյունքները ներկայացնելիս նշվեց, որ 2011թ. մայիսի 18-ին «Հիմալայա Գլոուբլ Հոլդինգզ Լթդ.» ընկերության ներկայացուցիչ ՀՀ արտոնագրային հավատարմատար Է. Նահապետյանի կողմից ներկայացվել է «CONFIDO» (հայտի համարը՝

20100461) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոք: Կոլեգիայի անդամի կողմից համառոտ նշվեց մերժման հիմքերը և բողոքի բովանդակությունը: Նշվեց, որ բողոքի հիմքում բերված փաստերից առաջինը, վերաբերում է «CONFIDO» և «CONFIDOR» ապրանքայյին նշանների նմանությանը: Նշված հիմնավորումը կոլեգիայի համար համոզիչ չէր, և վերջինս կարծում է, որ այդ նշանները շփոթելու աստիճան նման են: Կոլեգիան համաձայն է բողոքում ներկայացված հաջորդ փաստարկի հետ, այն է՝ գրանցված ապրանքային նշանը և հայտարկված ապրանքային նշանը, չնայած ներկայացվել են նույն 5-րդ դասի ապրանքների համար, բայց այդ ապրանքները ո՛չ նույնական են, ո՛չ էլ նույնատիպ:

Գրանցված «CONFIDOR» IR N460120 միջազգային ապրանքային նշանով մակնիշված քիմիական նյութը կիրառվում է գյուղատնտեսության, այգեգործության և անտառաբուծության մեջ և նախատեսված է հողի բարելավման, սննդային պահածոների պահպանման, բույսերի հիվանդությունների բուժման համար, կարգավորում է բույսերի աճը, պաշտպանում է բույսերը վնասատու կենդանիներից, իսկ մերժված «CONFIDO» ապրանքային նշանը հայտարկված է դեղագործական պատրաստուկներ և դիետիկ նյութեր բուժական նպատակների համար:
Կոլոգիան գտնում է, որ այս դեպքում կիրառելի չէ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդված 1-ին և 2-րդ կետերը և կարծում է, որ ապրանքային նշանը կարելի է գրանցել:

Ընդհանուր քննարկման արդյունքում, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների եւ դիմումների ներկայացման եւ քննարկման կարգի» 68-րդ կետի 1-րդ ենթակետով բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Չեղյալ ճանաչել հայտարկված ապրանքային նշանի կրկնական փորձաքննության մասին որոշումը և բավարարել «Հիմալայա Գլոուբլ Հոլդինգզ Լթդ.» ընկերության բողոքը ամբողջությամբ՝ գրանցելով «CONFIDO» (հայտի համարը՝ N 20100461) ապրանքային նշանը:

Բողոքարկման խորհրդի որոշմանը չհամաձայնելու դեպքում հայտատուն իրավունք ունի որոշումը ստանալու օրվանից վեցամսյա ժամկետում դիմել դատարան:

Բողոքարկման խորհրդի
նախագահ Ա. Ազիզյան